ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 հունվարի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

12
(2678)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲՈՒՄ ԵՆ. ՄԱՍ 12

Ինչպես հայտնի է, կառավարության որոշմամբ, Հայաստանում կենսաթոշակը կամ նպաստն անկանխիկ եղանակով ստացող քաղաքացիները 2022-ի հուլիսից ՀՀ տարածքում վճարային քարտերով վճարելու դեպքում ամեն ամիս ստանում են հետվճար՝ նախորդ ամսում կատարած անկանխիկ գործարքների հանրագումարի 10%-ի չափով, բայց ոչ ավելի, քան ամսական 5 000 դրամ: Կառավարությունը, որպես ծրագրի իրականացման արդյունք, ակնկալում էր, որ մինչեւ 2022-ի տարեվերջ ծրագրի փաստացի շահառու կդառնա եւ առնվազն 3 ամիս անընդմեջ կստանա նախատեսված հետվճարը բանկային քարտով կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների 80%-ը, սակայն կառավարության նախանշված ծրագրերն իրականություն չեն դարձել, եւ այդ մասին վերլուծություն է արել «Սիվիլնեթ»-ի փաստերի ստուգման հարթակը: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից, #CivilNetCheck-ի հարցմանը ի պատասխան, հայտնել են, որ Հայաստանում կենսաթոշակառուների եւ նպաստառուների թիվը ներկայում շուրջ 585 հազար է, որոնցից 474 հազարը թոշակը (նպաստը) ստանում է անկանխիկ՝ բանկային քարտով: Անկանխիկ եղանակով կատարված վճարումներից «քեշբեք» ստացող թոշակառուների եւ նպաստառուների թիվը 2022-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է շուրջ 67 հազար կամ քարտապան շահառուների 15%-ը (բոլոր թոշակ եւ նպաստ ստացողների 11%-ը): Սա կառավարության՝ մինչեւ տարեվերջ «անկնկալած» թվից ավելի քան 5 անգամ պակաս է: Միջին հաշվով թոշակառուներին ամսական վճարված հետվճարի չափը 2022-ի հուլիս-սեպտեմբերին կազմել է մոտ 2600-2900 դրամ, հոկտեմբեր-դեկտեմբերին՝ 3100-3400 դրամ: Ստացվում է՝ ներկա իրավիճակը հեռու է կառավարության ծրագրով նախատեսված ցուցանիշից. ծրագրից օգտվում է թոշակառուների միայն 11%-ը: Փաստացի հետվճարի միջին չափը 3 400 դրամ է, իսկ բանկային քարտով կենսաթոշակ եւ նպաստ ստացող քաղաքացիները նախընտրում են կանխիկացնել թոշակը:

Հշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը Մարդու իրավունքների պաշտպանի թեկնածուի փնտրտուքների մեջ է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Քրիստինե Գրիգորյանի հրաժարականից հետո ՔՊ-ն չի կարողանում ՄԻՊ թեկնածու գտնել, որը կհամապատասխանի բոլոր պահանջներին, միեւնույն ժամանակ, ընկալելի կլինի հանրության համար: Թեեւ այս օրերին ՄԻՊ թեկնածուի անուններ շրջանառվում են, բայց տեղեկացանք, որ ՔՊ-ն մինչ օրս էլ թեկնածու չունի: Ըստ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի՝ թեկնածուները կարող են առաջադրվել ՄԻՊ-ի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Հաշվի առնելով, որ 10-օրյա ժամկետը լրանում է հաջորդ շաբաթ, իշխող խմբակցությունը պետք է մյուս շաբաթ արդեն վերջնական որոշում կայացնի: Ըստ նույն օրենքի՝ ՄԻՊ ընտրելու համար անհրաժեշտ է 65 ձայն, այսինքն՝ ՔՊ-ն միայնակ կարող է անցկացնել իր թեկնածուին՝ անկախ ընդդիմության քվեարկությունից:

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ է հայտնի դարձել 15 զինվորի ողբերգական մահվան գործով: Մասնավորապես, մեզ հայտնի է դարձել, թե ինչ խոսակցություններ են ունեցել զինվորները իրենց սպայի հետ, եւ դեպքից առաջ ինչ է կատարվել կացարանում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ մինչ ողբերգական հրդեհը ռազմական ոստիկանությունը կացարանում ստուգումներ է արել եւ արգելված իրեր է հայտնաբերել , ինչի մասով կազմվել է արձանագրություն: Այս մասին զորամասի ղեկավար կազմը տեղեկացված է եղել, որից հետո սպան խոսակցություն է ունեցել զինվորների հետ արգելված իրերի անթույլատրելիության մասով: Բացի այդ, սպայական կազմը եւս խիստ նկատողություն է ստացել: Չի բացառվում, որ զինվորների ծնողները կացարանում առկա լարված իրավիճակն են նկատի ունեցել իրենց հարցազրույցներում: Մասնավորապես, մահացած զինծառայողներից, Լոռու մարզի Հոբարձի համայնքի բնակիչ Ռոստոմ Ասրյանի հայրը՝ Արտակ Ասրյանը, հայտնել էր. «Դա բենզինի բան չէ, ինչ կա, այդ աֆիցերի տակ է: Երկու օր զինվորների հետ լարված է եղել, երկու օր առաջ այնտեղ լուրջ կռիվ է եղել: Տղես որ զանգեց, ասաց՝ պա՛պ, շատ վատ է, ասացի՝ ի՞նչ է եղել, մենակ քո՞ համար է վատ, թե՞ բոլորիդ համար լավ չի. ասում է՝ բոլորիս»: Հիշեցնենք, որ հունվարի 19-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում բռնկված հրդեհի հետեւանքով զոհվել էր 15 ժամկետային զինծառայող, 3 զինծառայող տեղափոխվել էր Երեւան՝ Այրվածքաբանության ազգային կենտրոն:

Ադրբեջանում այս պահի դրությամբ հաստատված ու նույնականացված 33 հայ ռազմագերի է պահվում: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում այս թիվը միջազգային իրավական հարցերով Հայաստանի ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի մամուլի քարտուղար Հասմիկ Սամվելյանն է ներկայացնում: Սամվելյանի ներկայացրած թիվը նաեւ ՄԻԵԴ-ում հայ ռազմագերիների ներկայացուցիչ, իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանն է «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատում՝ նշելով, սակայն, որ, բացի հաստատված ու Կարմիր խաչի ուշադրության կենտրոնում գտնվող 33 ռազմագերիներից, չհաստատված, բայց փաստերով հաստատված դեպքերը 80-ն են: «Մեր փաստահավաքությունը կարողացել է հիմնավորել գերեվարման հավելյալ առնվազն 80 դեպք, ու չենք բացառում՝ գերեվարման նոր դեպքեր էլ լինեն, պարզապես մեր գործունեությամբ այդքանն ենք կարողացել հիմնավորել,- նշում է նա՝ ավելացնելով:- Ցավոք, եղել է շուրջ 40 անձի դեպք, որ գերեվարվելուց հետո սպանվել կամ գնդակահարվել են: Դա վկայող ապացույցներ ունենք: Ինչ վերաբերում է վերոնշյալ 80 դեպքին, ապա անհայտ է վերջիններիս ճակատագիրը: Նրանք կարող են կենդանի լինել, բայց իրավական դաշտից դուրս բերվեն ու դառնան բռնի անհետացածներ կամ սպանվածներ, բայց Ադրբեջանը ոչ հաստատում է նրանց գերեվարումը, ոչ էլ վերադարձնում է դիերը՝ կատարած հանցագործությունները չինքնախոստովանելու համար»: Նկատենք, որ վերջին շրջանում գերիների, առավել եւս՝ նրանց հավանական վերադարձի մասին հայտարարություններ չեն հնչում, եւ դա՝ այն դեպքում, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2021-ի արտահերթ ընտրությունների քարոզարշավի ժամանակ հայտարարում էր. «Գերիները մեզ կներեն, եթե 1-2 ամիս ավելի մնան Բաքվի բանտերում»: Հայտարարությունից այժմ ավելի քան տարիուկես է անցել, բայց մինչեւ այս պահը մեր հայրենակիցները Բաքվի բանտերում շարունակում են տանջվել ու կտտանքների ենթարկվել: Ընդհանուր առմամբ, ստացվում է՝ Բաքվի բանտերում այս պահի դրությամբ, հավանական է, մոտ 120 ռազմագերի կարող է պահվել:

ՇՐՋԱՓԱԿՎԱԾ ԱՐՑԱԽ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՅՆ ԶԱԶՐԱԽՈՍՈՒՄ ԵՆ

Արցախը ոչ միայն Հայաստանին, այլ նաեւ աշխարհին կապող տրանսպորտային միակ հանգույցը՝ Լաչինի միջանցքը, արդեն 47-րդ օրն է, ինչ փակված է: Շրջափակված Արցախում գտնվող ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Սոֆյա Հովսեփյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է՝ հայկական երկրորդ հանրապետությունում առկա խնդիրները գնալով ավելի են սրվում, մարդիկ բախվում են կենսական անհրաժեշտության ու նշանակության հարցերի:

Հաճախ, նշում է, մարդիկ չեն էլ պատկերացնում, թե ինչ սառնամանիքի պայմաններում են ապրում երեխաները, ու եթե Արցախի մարզերում, գյուղական համայնքներում ցրտին դիմակայում են փայտե վառարանների միջոցով, ապա Ստեփանակերտում հարցն իսկապես սուր է դրված: Այս ամենին էլ գումարվում են գազի հաճախակի անջատումները, ու պատկերն ավելի է խտանում:

Իրականում, ասում է մեր զրուցակիցը, իրավիճակը շատ ավելի լուրջ է, քան պատկերացնում են Հայաստանում:

«Ժողովուրդ» օրաթերթն այս եւ այլ հարցերի շուրջ զրուցել է ԱԺ նախկին պատգամավոր Սոֆյա Հովսեփյանի հետ:

-Տիկին Հովսեփյան, ի՞նչ իրավիճակ է Արցախում:

-Մարդիկ բախվում են կենսական անհրաժեշտության խնդիրների ու հարցերի: Շուտով, հնարավոր է, առհասարակ էլեկտրաէներգիա ունենալու հնարավորությունը չլինի: Ինչպես գիտեք, ավելի են երկարացրել էլեկտրաէներգիայի անջատումների ժամանակացույցը: Վթարներ եւս շատ են էլեկտրաէներգիայի խափանումների պատճառով: Կարող են թաղամասեր լինեն, որ ամբողջ օրը հոսանք չլինի:

-Այսինքն՝ դեռ մարդիկ չե՞ն գիտակցում, թե ինչ լուրջ իրավիճակ է Արցախում:

-Այո, մարդիկ չեն էլ պատկերացնում, թե ինչ սառնամանիքի պայմաններում են ապրում երեխաները, ու եթե Արցախի մարզերում, գյուղական համայնքներում ցրտին դիմակայում են փայտե վառարանների միջոցով, ապա Ստեփանակերտում հարցն իսկապես սուր է դրված: Այս ամենին էլ գումարվում են գազի հաճախակի անջատումները, եւ պատկերացրեք, թե ինչ իրավիճակ է ստեղծվում: Կենսական կարեւորություն ունեցող հարցեր կան Արցախում. հացի փուռերը չեն աշխատում, տաքսիները, առաքիչները չեն աշխատում, եւ այդպես շարունակ: Պետական ապարատը եւս դժվար է աշխատում, եւ հաստատություններն ուղղակի չեն ջեռուցվում, երեխաներն ամբողջ օրը տանը, կրթությունից հեռու եւ այս ամբողջ իրականության մեջ ապրում են:

-Ի՞նչ կանխատեսումներ եք անում:

-Գիտեք, այս ամենը հիշեցնում է Հայաստանի մութ եւ ցուրտ տարիները: Իհարկե, դրանք դաժան էին, բայց կոմունիկացիաների հնարավորությունները շատ էին: Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապ ուներ: Այս երեւույթները չես կարող համեմատել իրար հետ: Հայաստանյան իշխանությունը, ի դեմս ՔՊ-ի, իրականում ոչինչ չի անում, իսկ եթե ՔՊ որեւէ պատգամավոր որեւէ հարթակում խոսում է Արցախի մասին, ապա դա իր PR-ի համար է անում: Հայաստանը ստորագրել է փաստաթուղթը եւ մի կողմ է քաշվել: Դա զազրելի թուղթ է, որը նա ստորագրեց եւ անցավ մի կողմ: Ազգային ժողովը նրանք ամեն րոպե կարող են օգտագործել շրջափակված Արցախի հարցը բարձրաձայնելու համար, հետեւաբար այս ամենը միայն PR-ի համար է արվում: Ամբողջ հայ ազգը ենթարկվում է դաժանությունների: Այսօր որեւէ այլ հարց Ազգային ժողովում չպետք է քննարկվի, քան Արցախի հարցն է, քան Հայաստանի սուվերեն տարածքի վրա հարձակումներն են, բայց փատսացի տեսնում ենք, որ իրենք որեւէ բան չեն անում, բացի զազրախոսությունից եւ, օրինակ, ասելուց, թե Արցախն Ադրբեջան է: Իշխանությունները շարունակում են իրենց գործունեությամբ ցույց տալ, որ որեւէ դրական բանի ընդունակ չեն:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՄԻՊ-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ Է ՍԱՀՄԱՆՈՒՄ ՕՐԵՆՔԸ

Արդեն չորրորդ օրն է՝ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը թափուր է: ArmLur.am-ի հետ զրույցում ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը հայտնեց, որ այս պահի դրությամբ որեւէ խմբակցություն ՄԻՊ թեկնածու չի առաջադրել:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն՝ թեկնածուները կարող են առաջադրվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Ընդ որում, ՄԻՊ-ին առաջադրելու իրավունք ունեն ԱԺ բոլոր խմբակցությունները: Նրան ընտրելու համար խորհրդարանում անհրաժեշտ է 65 ձայն, եւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը միայնակ կարող է ապահովել անհրաժեշտ ձայները, իսկ «Հայաստան» ու «Պատիվ ունեմ» խմբակցությունները միասին 35 պատգամավոր ունեն:

Նրան ընտրելու կարգը սահմանում է «Ազգային ժողովի կանոնակարգ» հոդված 145-ը: Թեկնածուին նախ պետք է հավանություն տան Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի հանձնաժողովում, ապա հարցը կմտնի լիագումար նիստերի օրակարգ: Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում պաշտպանի ընտրություններն անցկացվում են պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 1 ամսվա ընթացքում:

Իսկ ի՞նչ է այժմ կատարվում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՄԻՊ-ին պետք է փոխարինի աշխատակազմի դեպարտամենտի տարիքով ամենաավագ աշխատակիցը: ՄԻՊ աշխատակազմից «Հրապարակ»-ին փոխանցել էին, որ Քրիստիննե Գրիգորյանին փոխարինելու եւ մինչեւ նոր ՄԻՊ-ի ընտրությունը օմբուդսմենի պարտականությունները ժամանակավոր կատարելու է աշխատակազմի քաղաքացիական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար Վլադիմիր Հովհաննիսյանը: Նա ՄԻՊ հնաբնակներից է:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ՔՊ-ական պատգամավորների օգնականները պարգեւավճար են պահանջում ԱԺ-ում արդեն երկու օր է՝ ստորագրահավաք է իրականացվում. ՔՊ-ական մի խումբ պատգամավորների օգնականները, «շեֆերի» գիտությամբ, պարգեւավճար են պահանջում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ստորագրահավաքը նախաձեռնել ու կառավարում են ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, նրա օգնականը (դե ֆակտո խմբակցության ղեկավարը, Կոնջորյանի մտերիմը), ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, նրանց օգնականներն ու իշխող խմբակցության փորձագետները: Ակցիային միացել են որոշակի նախաձեռնողականությամբ Պաշտպանության հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի օգնականն ու փորձագետները: Բանն այն է, որ օգնականները, տեսնելով՝ պետծառայողները ստանում են պարգեւավճար, իրենք եւս դիմել են ԱԺ նախագահին՝ պարգեւավճար ստանալու պահանջով: Նկատենք, որ ՔՊ-ական պատգամավորների օգնականները պահանջում են պարգեւավճար, որն օրենքով չի հասնում, այլ միայն պետծառայողներին է հասանելի՝ որպես պրոֆեսիոնալների: Օգնականները, սակայն, որ օրերով աշխատանքի չեն ներկայանում, ուզում են բարձր աշխատավարձ: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հրաժարվում է պահուստային ֆոնդից պարգեւավճար տալ պատգամավորների օգնականներին, եւ այս պատճառով ՔՊ ներսում լուրջ բախումներ են սկսվել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ շուրջ 36 պատգամավորի օգնական է միացել ստորագրահավաքին.

1) Հայկ Կոնջորյանը
2) Արթուր Հովհաննիսյանը
3) Խաչատուր Սուքիասյանը
4) Մարիա Կարապետյանը
5) Թագուհի Ղազարյանը
6) Արուսյակ Ջուլհակյանը
7) Ծովինար Վարդանյանը
8) Ջարուհի Բաթոյանը
9) Գուրգեն Արսենյանը
10) Վաղարշակ Հակոբյանը
11) Վիլեն Գաբրիելյանը
12) Հայկ Սարգսյանը
13) Հռիփսիմե Հունանյանը
14) Ալխաս Ղազարյանը
15) Արեն Մկրտչյանը
16) Էմմա Պալյանը
17) Անդրանիկ Քոչարյանը
18) Նարեկ Գրիգորյանը
19) Վիգեն Խաչատրյանը
20) Գագիկ Մելքոնյանը
21) Հայկ Ցիրունյանը
22) Արմեն Խաչատրյանը
23) վերջերս մանդատ ստացած Կարեն Սարուխանյանը

Այս առիթով դիմեցինք ԱԺ, որտեղից հաստատեցին մեր տեղեկությունը. «Տվյալ պարգեւավճարը վերաբերում է միայն պետծառայողներին եւ չի տարածվում ԱԺ պատգամավորների օգնականների վրա, այդ պատճառով էլ նրանք պարգեւավճարը չեն ստացել: Քանի որ տվյալ պարգեւավճարը օրենքով վերաբերում է միայն պետծառայողներին, համարվում է կիսամյակային պարգեւավճար, իսկ պատգամավորների օգնականներին օրենքով չի հասնում պարգեւավճար»: Դիտարկմանը, որ մինչ այս պատգամավորների օգնականները եւս օգտվել են կիսամյակային պարգեւավճարներից, ինչու արդյոք չեն ստացել այս անգամ, ԱԺ-ից ասացին. «Պարգեւավճարների ֆոնդը խնայողությունների հաշվին է ձեւավորվել, քանի որ պետծառայողները ստացել են պարգեւավճար, խնայողությունների հաշվին: Պատգամավորների օգականներին էլ է տրվել պարգեւավճար. հիմա այլ իրավիճակ է: Աշխատավարձային ֆոնդը բարձրացել է, իսկ պարգեւավճարների ֆոնդը՝ կրճատվել: Պարգեւավճարներ տրվում են խնայողությունների հաշվին, այժմ էլ դեռ հունվար ամիսն է, այդ պատճառով պարգեւավճար չի տրվելու նրանց»:

«ՃԱՔԵՐ» Է ԱՌԱՋԱՑԵԼ

Ամերիկայի Միացյալ Նահանգների, Գերմանիայի ու Եվրոպական Միության այլ երկրների ղեկավարները մինչեւ Ուկրաինային տանկեր տրամադրելն ու Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկիի՝2022-ի դեկտեմբերին ԱՄՆ կատարած այցը անհամաձայնություն են ունեցել՝ պաշտոնական Կիեւին տանկեր տրամադրելու հետ կապված: Այս մասին Politico լրատվականն է գրում՝ հավելելով, որ Արեւմուտքի երկրների ու ԱՄՆ ղեկավարության անհամաձայնությունն ԱՄՆ առաջնորդ Ջո Բայդենն է «հարթել»՝ շտապելով առաջինը տանկեր ուղարկել Ուկրաինա:

Բեռլինի ու Վաշինգտոնի դիսկուրսի առանցքը, պարբերականի տեղեկություններով, այն է եղել, թե կհամաձայնեն արդյոք կողմերը միաժամանակ ռազմական օգնություն ցուցաբերել Կիեւին:

Զելենսկին ԱՄՆ այցի ժամանակ նախագահ Բայդենին խնդրել էր տանկեր ու հրթիռներ տրամադրել Ուկրաինային, բայց Սպիտակ տանը կայացած հանդիպումներից հետո պարզ է դարձել՝ ամերիկյան չինովնիկները Կիեւին հրթիռներ չեն տրամադրի ու կբավարարվեն միայն տանկեր ուղարկելով: Հենց այդ ժամանակ էլ ԱՄՆ ղեկավարությունն իր առջեւ խնդիր է դրել Արեւմուտքի անդամ պետություններին համոզել նույնպիսի սցենարով առաջանորդվել: Եվ, ըստ լրատվականի տեղեկությունների, հենց դա էլ պատճառ է եղել ԱՄՆ-ԵՄ հարաբերություններում որոշակի «ճաքեր» առաջանալու համար: Ի դեպ, հավելում է պարբերականը, տարակարծություն ոչ միայն ՆԱՏՕ-ի անդամ երկրների միջեւ է եղել, այլ հենց ԱՄՆ ներսում՝ պետական տարբեր գերատեսչությունների միջեւ: Այսպես, ԱՄՆ պաշտպանական գերատեսչության ներկայացուցիչներն այն համոզմանն են եղել, որ նպատակահարմար չէ Կիեւին Abrams տանկեր մատակարարել, քանի որ դրանք մշտապես սարքին պահելը դժվար է, իսկ ուկրաինացիներին մեքենայի հետ կապված տեխնիկական հարցերը սովորեցնելը ժամանակատար ու բարդ է լինելու: Պենտագոնի այս տեսակետը, մեղմ ասած, դուր չի եկել Բայդենի աշխատակազմի՝ պաշտպանական արդյունաբերության հարցերով զբաղվող պաշտոնյաներին:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀՕԳՈՒՏ ԵՄ-Ի

Երեւանում գերադասել են ընտրություն կատարել՝ հօգուտ ԵՄ-ի: Երեկ նման հայտարարություն է տարածել ՌԴ ԱԳՆ՝ արձագանքելով հայ-ադրբեջանական սահմանին ԵՄ քաղաքացիական նոր առաքելության տեղակայման որոշմանը:

ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչության համոզմամբ՝ Հայաստանի սահմանամերձ շրջաններում Եվրամիության ներկայացուցիչների հայտնվելը կարող է միայն աշխարհաքաղաքական առճակատում բերել տարածաշրջան եւ սրել առկա հակասությունները:

ArmLur.am-ի հետ զրույցում «Հայաստան» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Թեւանյանը, անդրադառնալով ՌԴ ԱԳՆ այս հայտարարությանը, նշում է՝Հայաստանը դարձել է աշխարհաքաղաքական բախումների թատերաբեմ, ինչը ծանր հետեւանքներ է ունենալու մեզ համար:

ԶՄԵՌԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ՝ ԵԽԽՎ-ՈՒՄ

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում քննարկումները շարունակվում են: Հունվարի 26-ին շարունակվել են ելույթները, ընդունվել է նաեւ բանաձեւ, որը նպատակ ունի Ադրբեջանին ստիպել կատարել իր պարտավորությունները: «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Հայկ Մամիջանյանը եւս ելույթ է ունեցել ԵԽԽՎ ձմեռային նստաշրջանում:

«Ձեր դեմքերի արտահայտությունը խոսում է այն մասին, որ կանխատեսում եք, որ հայերն այժմ կխոսեն ադրբեջանական ագրեսիայի, գերիների, Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին, իսկ Ադրբեջանի պատվիրակությունը, ի պատասխան, ծանրաբեռնելու է ձեզ կեղծ հակադարձումներով: Բայց թո՛ւյլ տվեք ինձ բացատրել, թե ինչու ենք պարտավոր բարձրաձայնել Լաչինի միջանցքի ադրբեջանական շրջափակման հետեւանքով առաջացած հումանիտար աղետի եւ վերը նշված այլ թեմաների մասին: Խնդրում եմ իմ խոսքերն ընկալել ոչ թե որպես քաղաքական ելույթ, այլ որպես խորհելու նյութ»,- նշում է նա:

Մամիջանյանը ընդգծեց՝ այստեղ ներկաներից ոմանք այս նիստից հետո կայցելեն Ստրասբուրգի ռեստորաններից մեկը: «Ես խնդրում եմ ձեզ ընթրիքի ընտրության ժամանակ նկատի ունենալ, որ Լեռնային Ղարաբաղում 120.000 մարդ կարող է իր ընտրությունն անել միայն սովորական մակարոնեղենի կամ հնդկաձավարի միջեւ՝ ո՛չ բանջարեղեն, ո՛չ միրգ, ո՛չ ուրիշ այլ բան: Եվ երբ դուք, հարգելի՛ գործընկերներ, կհասնեք ձեր հարմարավետ ու տաք հյուրանոցային համարները՝ սառը քամուց թաքնվելու եւ նորություններ դիտելու համար, խնդրում եմ հիշել, որ 120.000 հայ օրական 6-8 ժամ չունի գազ եւ էլեկտրականություն»,- հավելում է նա:

Մամիջանյանը հավելում է. «Ձեզանից նրանց, ովքեր երեխաներ ունեն, խնդրում եմ պատկերացնել, թե ինչ կանեիք, եթե աշխարհում ինչ-որ մեկը խոչընդոտեր ձեր երեխային կրթություն ստանալ: Եթե դասասենյակներում այնքան ցուրտ լիներ, որ դպրոցները ստիպված գրեթե մեկ ամսով փակվեին: Եվ եթե ձեզանից որեւէ մեկն օրվա ավարտին գլխացավ ունենա, խնդրում եմ ցավազրկող դեղահաբը կուլ տալիս հիշել, որ Արցախում 120.000 հայ այդ դեղամիջոցները գրեթե չունի: Եվ երբ պարոն Սեիդովը կսկսի պատմել, որ ինքնահռչակ ակտիվիստներն օգտվում են իրենց խոսքի ազատության իրավունքից, թեպետ «խոսքի ազատությունն Ադրբեջանում» նախադասությունն ինքնին օքսիմորոն է, խնդրում եմ հիշել, որ Ադրբեջանը Յեյլի համալսարանի բնապահպանական արդյունավետության ինդեքսում 104-րդն է, եւ ես չեմ հիշում, որ Ադրբեջանում երբեւէ էկոլոգիական թեմայով բողոքի որեւէ զանգվածային ցույց տեղի ունեցած լինի, չնայած քիչ առաջ ականատես եղանք, թե ինչպես է ադրբեջանական պատվիրակության ներկայացուցիչը կասկածի տակ դնում ֆրանսիական ժողովրդավարությունը: Կարող եք պատկերացնել, որ 1989 թվականի նոյեմբերի 9-ից հետո՝ Բեռլինի պատի փլուզումից հետո, Եվրոպայում կլինի մի վայր, որտեղ ընտանիքներն ու հարազատները միմյանցից բաժանված կլինեն: 21-րդ դարում երեխաները մեկուկես ամսից ավելի չեն կարողանա հանդիպել իրենց ծնողներին, բայց հանկարծ սխալ կարծիք չկազմեք. մենք չենք կարող 30 տարի սպասել. Լաչինի միջանցքը պետք է հիմա ապաշրջափակվի: Եվ ինչպես մի քանի շաբաթ առաջ հայտարարեց Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտը. «Աշխարհը պետք է անհապաղ գործի՝ կանխելու Հայոց երկրորդ ցեղասպանությունը»:

ԵԽԽՎ ձմեռային նստաշրջանի օրակարգում ներկայացված էր նաեւ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում տղամարդկանց մասնակցության հարցը, որի քննարկման շրջանակում ելույթ է ունեցել ԵԽԽՎ-ում ԱԺ պատվիրակության անդամ Սոնա Ղազարյանը:

«Հարցի շրջանակում ներկայացրի նաեւ Հայաստանի փորձը, այն օրենսդրական նախաձեռնությունը, որով հանդես ենք եկել գործընկերներիս հետ միասին: Տղամարդիկ կարող են աջակցել սոցիալական նորմերի վերաձեւակերպմանը եւ պետք է աջակցեն մեզ առանց բռնության հասարակություն ունենալու հարցում: Ես կիսում եմ տիկին Ստեյնենի վերլուծությունն առ այն, որ բռնությունը վտանգ է ժողովրդավարության համար, եւ հենց սա կարող է լինել հերթական պատճառ կամ առիթ, որպեսզի տղամարդիկ եւ կանայք միասին գործեն»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին օրերին ԱՄՆ-ի եւ Եվրոպայի կողմից ավելացել են Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհին ապաշրջափակելու մասին հայտարարությունները: Մի քանի օր շարունակ ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից հայտարարություններ են հնչում, թե ԱՄՆ-ին շարունակում է մտահոգել Լեռնային Ղարաբաղում հումանիտար իրավիճակի վատթարացումը:

Նեդ Փրայսը իր հայտարարություններից մեկում նշել էր, թե պետք է ելք գտնել ստեղծված փակուղուց՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու համար: Նեդ Փրայսի խոսքերով՝ առաջընթացի կարելի է հասնել բանակցությունների միջոցով:

Իսկ, ահա, ԵԽԽՎ-ն Ադրբեջանին կոչ է անում բացել Լաչինի միջանցքը, ազատ արձակել բոլոր հայ գերիներին: Նրանք այսօր կքննարկեն զեկույց ընդունելու հարցը:

ԱՋԱԿՑԵԼՈՒ ԵՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԱՄՆ-ն հանձնառու է աջակցելու Հայաստանի եւ Ադրբեջանի խաղաղության բանակցություններին: Այս մասին ասել է ԱՄՆ պետդեպի փոխխոսնակ Վեդանտ Պատելը:

«ԱՄՆ-ն ՌԴ-ի միջնորդությամբ ստորագրված 2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարության կողմ չէ, որը հանգեցրել է ռուսական խաղաղապահների տեղակայմանը, հետեւաբար հավելյալ ոչինչ չենք կարող ասել, [թե Ռուսաստանը խաղաղության աջակցո՞ղ է, թե՞ խաթարող]: Բայց հակամարտությունը խիստ կարեւոր է Բլինքենի համար, եւ նա շարունակում է լրջորեն ներգրավված մնալ»,- ասել է նա:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Կարինե Դավոյանը նշանակվել է վարչապետի օգնական.

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասով՝ Կարինե Դավոյանին նշանակել վարչապետի օգնական»,-ասված է որոշման մեջ:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԳՈՐԾՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

Պարզվել են 32-ամյա տղամարդու կողմից էջմիածին քաղաքի 41-ամյա բնակչուհու դեմին ծծմբաթթու լցնելու փորձի դեպքի վերաբերյալ հանգամանքները:

Այս մասին հայտնում են ՔԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից՝ մանրամասնելով, որ քննությամբ տվյալներ են ստացվել այն մասին, որ Շիրակի մարզի բնակիչ 32-ամյա տղամարդը, Վաղարշապատ քաղաքի 42-ամյա բնակչի պատվերով, նույն քաղաքի 43-ամյա բնակչի կազմակերպմամբ, գումարի դիմաց ծծմբական թթու լցնելու եղանակով այլանդակել է վերջինիս կնոջ՝ նույն քաղաքի 41-ամյա բնակչուհու դեմքը:

Պատվերը կատարելու նպատակով 32-ամյա տղամարդը 2022թ. հոկտեմբեր ամսին, նախապես իր հետ վերցնելով ծծմբական թթու լցրած ներարկիչը, մի քանի անգամ գնացել է 41-ամյա կնոջ բնակության վայր, հանցավոր արարքն իրագործել չի կարողացել մի դեպքում կնոջ՝ տանը չլինելու պատճառով, իսկ մյուս դեպքում՝ քանի որ ձերբակալվել է ոստիկանության աշխատակիցների կողմից: Անձնական խուզարկությամբ տղամարդու մոտ հայտնաբերվել է նախապես լուծույթով լցված ներարկիչը:

Վարույթից՝ 41-ամյա բնակչուհու դեմքին ծծմբաթթու լցելու փորձի վերաբերյալ անջատված մասով 32-ամյա տղամարդուն վերջնական մեղադրանք է ներկայացվել:

Միջնորդություն է հարուցվել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան 32-ամյա տղամարդու նկատմամբ խափանման միջոց կալանք ընտրելու մասին, որը բավարարվել է:

Այդ մասով նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

Նախաքննության փուլում գտնվող քրեական վարույթի մյուս մասի շրջանակներում վարութային եւ ապացուցողական, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումները շարունակվում են:

Վաղարշապատ քաղաքի 42-ամյա բնակչին մեղադրանք է ներկայացվել մերձավոր ազգական հանդիսացող կնոջը ծանր մարմնական վնասված հասցնելու փորձի կազմակերպման եւ միջնորդության համար, իսկ 43-ամյա բնակչին՝ այդ հանցավոր արարքի կատարումը պատվիրելու համար: Նա մեղադրվում է նաեւ խոշոր չափերով թմրամիջոցի ապօրինի շրջանառության համար:

Ընդ որում՝ վարույթն իրականացնող մարմինը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ նշված երկու անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որոնք մերժվել են, ինչից հետո 43-ամյա բնակիչը կատարել է առերեւույթ եւս մեկ հանցավոր արարք:

Նշված քրեական վարույթին միացված այլ վարույթներով քննության առարկա են նաեւ մի քանի այլ հանցագործությունների՝ ավտոմեքենայի հրկիզման փորձ կատարելու, խոշոր չափերով թմրամիջոցի ապօրինի շրջանառության եւ իրացման, Վաղարշապատի մթերային խանութներից մեկից մի քանի տուփ ծխախոտի հափշտակության դեպքեր: Այս մասով նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԱՅՐՎԵԼ Է

Հունվարի 26-ին՝ ժամը 23:34-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Խաչիկ Դաշտենցի փողոցի 60 հասցեի մոտակայքում այրվում է ավտոմեքենա: Հրդեհը մեկուսացվել է ժամը 23:50-ին, մարվել՝ 23:58-ին: Այրվել է VAZ-2108 մակնիշի ավտոմեքենան:

ԿԱԼԱՆՔ՝ ԵՐԿՈՒ ԱՄՍՈՎ

ՀՀ ՊՆ N զորամասի թիկունքի պետ-հրամանատարի թիկունքի եւ կոմունալ շահագործման ծառայության գծով տեղակալ Գ.Ա.-ի նկատմամբ, Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ, որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը՝ երկու ամիս ժամկետով: Գլխավոր դատախազությունը տեղեկացրել էր, որ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 2023 թվականի հունվարի 25-ին որոշում է կայացվել ՀՀ ՊՆ N զորամասի թիկունքի պետ-հրամանատարի թիկունքի եւ կոմունալ շահագործման ծառայության գծով տեղակալ Գ.Ա.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասով (զինվորական պաշտոնեական անփութություն, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ): 2023 թվականի հունվարի 26-ին Գ.Ա.-ն ձերբակալվել էր: Հավելենք, որ այս կալանավորումը միակ չի լինելու: ArmLur.am-ը գրել էր, որ կալանավորումների շքերթ է սպասվում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ 49 ՀԻՎԱՆԴ

Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը Ադրբեջանի կողմից արգելափակելու պատճառով Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության Հանրապետական բժշկական կենտրոնից երեք հիվանդ՝ «Ստամոքսի անտրալ հատվածի քաղցկեղ՝ ռեգիոնար լիմֆատիկ հանգույցների ախտահարումով», «Ձախ կրծքագեղձի քաղցկեղ» եւ «Ջույգ ծնկների վալգուսային դեֆորմացիա, վիճակ հեմիէպիֆիզեոդեզից հետո» ախտորոշումներով, հունվարի 27-ին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ տեղափոխվել են ՀՀ տարբեր մասնագիտացված բժշկական կենտրոններ: Ինչպես տեղեկանում ենք նախարարության տարածած հաղորդագրությունից, Արցախի առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող բուժհաստատություններում շարունակում են դադարեցված մնալ պլանային վիրահատությունները: «Արեւիկ» բուժմիավորումում 9 երեխա գտնվում է նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքներում: «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 13 բուժառու գտնվում են վերակենդանացման բաժանմունքում, որոնցից 6-ը ծայրահեղ ծանր վիճակում են: Մինչ այսօր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ Արցախից Հայաստան են տեղափոխվել ընդհանուր 49 հիվանդ:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔ

ՀՀ ՊԵԿ Արեւմտյան մաքսատուն-վարչությունը բացահայտել է մաքսային կանոնների խախտման նոր դեպք:

Ինչպես հայտնում են Պետական եկամուտների կոմիտեից, օրերս Աթենք-Երեւան չվերթով ՀՀ ժամանած քաղաքացին ՊԵԿ Արեւմտյան մաքսատուն-վարչության ուղեւորների մաքսային հսկողության բաժնում ընտրել է մաքսային հսկողության երկուղի համակարգի «Կանաչ ուղի» ընթացակարգը: Մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների տեղափոխման վերաբերյալ հիմնավոր կասկածներ ունենալով՝ քաղաքացու կողմից «Կանաչ ուղի» մաքսային հսկողության գոտու ելքի գիծը հատելուց հետո քաղաքացին մաքսային ծառայողների կողմից ուղեկցվել է «Կարմիր ուղի» հսկողության գոտի, որտեղ մաքսային հսկողության են ենթարկվել նրան պատկանող ուղեբեռները:

Մաքսային զննման արդյունքում պարզվել է, որ քաղաքացու ուղեբեռներում առկա է տարբեր տեսակի եւ չափի չհայտարարագրված 10 բնական մորթե մուշտակ: Դեպքի առնչությամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, եւ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի հատկանիշներով նշանակվել է շուրջ 250 հազար ՀՀ դրամի չափով տուգանք՝ չհաշվարկված մաքսային վճարների ընդհանուր գումարի քսան տոկոսի չափով:

Բացի այդ, նշված մուշտակները քաղաքացու կողմից «բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով հայտարարագրվել են, որի արդյունքում էլ վերջինիս կողմից վճարվել են օրենքով սահմանված շուրջ 1,3 միլիոն ՀՀ դրամի չափով մաքսային վճարներ:

ԱԱԾ-Ն ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

Սոցիալական կայքերի էջերով տարածվում է գովազդային տեսահոլովակ, որ ՀՀ քաղաքացիները «գազի վաճառքով» զբաղվելու եւ «Գազպրոմ Հայաստան» ընկերության «արժեթղթերում» ֆինանսական փոքր ներդրումներ կատարելու դիմաց, իբրեւ թե, կարող են մեծ գումարներ աշխատել: Այս մասին հայտնում է ԱԱԾ-ն:

ՀՀ քաղաքացիները, Instagram եւ Fаčebook սոցիալական կայքերի Way to suččess անվանումով էջում նկատելով «Գազպրոմ» ընկերության՝ բարձր աշխատավարձով աշխատանքի մասին տարածվող գովազդային հոլովակը, տրամադրել են իրենց անձնական տվյալները, որից հետո վերջիններիս հետ Whatsapp-ով կապ են հաստատել իբրեւ թե «Գազպրոմ»-ի աշխատակիցները՝ աշխատանքի մանրամասները քննարկելու նպատակով: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը քաղաքացիներին կոչ է անում խուսափել եւ զերծ մնալ միջազգային չափանիշների խարդախության սխեմային մասնակցություն ունենալու գայթակղությունից, ոչ պաշտոնական կայքերում հրապարակվող կասկածելի ծրագրերում ներդրում կատարելու առաջարկներից, ինչպես նաեւ չտրամադրել անձնական եւ բանկային հաշիվների վերաբերյալ տվյալներ՝ ֆինանսական կորուստներից խուսափելու նպատակով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 26-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 56 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ՄՐՑՈՒՅԹ ՉԵՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ

2019թ. սեպտեմբերից գրեթե երեքուկես տարի Երեւանի պետական համալսարանի Իջեւանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատարն է Անուշավան Մակարյանը: Նրան հարցրի, թե դա աշխատանքային օրենսդրության խախտում չէ արդյոք. ասաց, որ, իր կարծիքով, ոչ, ինքը պաշտոնավարում է՝ իր հետ կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն: Ե՞րբ է ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի տնօրենի թափուր տեղի համար մրցույթ հայտարարվելու: Ա. Մակարյանը պատասխանեց, որ այդ հարցով պետք է դիմել Երեւանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին: Որպես համալսարանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Մակարյանի պաշտոնավարման օրոք ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղում Մանկավարժություն մասնագիտության գծով մագիստրատուրան սովորում են բուհի Իջեւանի մասնաճյուղում, ինչը, որոշ գիտնականների կարծիքով, Իջեւանի մասնաճյուղում բակալավրիատն ավարտածներին հնարավորություն չի տալիս Երեւանում՝ մայր բուհում մասնագիտական կրթության որակական աճ ունենալ: Այդ կապակցությամբ Ա. Մակարյանն ասաց, որ Մանկավարժություն մասնագիտության մագիստրատուրայում դասավանդելու համար Երեւանից Իջեւան են ժամանում գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ, դոցենտներ, մագիստրատուրա ավարտածներին ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն է գնահատում: ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի տնօրինության դեմ քիչ չեն դատական հայցերը, ներկայումս որքա՞ն է այդ հայցվորների թիվը: Այդ հարցին Ա. Մակարյանը չպատասխանեց՝ խորհուրդ տալով մնացած հարցերը գրավոր ներկայացնել:

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՉԵՆ ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ

Հունվարի 21-ին Տավուշի մարզում իր ծառայությունը սկսեց պարեկային ծառայության ստորաբաժանումը: Դրա հետեւանքով անցած շաբաթում նվազել են մարզի գազալցակայանների եւ բենզալցակայանների եկամուտները: Մարզի բազմաթիվ բնակիչներ, որոնք տրանսպորտային միջոցներ ունեն, բանկերում չմարած վարկեր ունեն, դրամական միջոցների սղության պատճառով չեն կարողացել իրենց ավտոմեքենաների տեխնիկական զննում անցկացնել, պարեկների կողմից արձանագրություն կազմելուց վախենալով՝ խուսափում են վարել իրենց տրասպորտային միջոցները եւ դրանք լիցքավորել: Մարզի գյուղերի շատ բնակիչներ դաշտային աշխատանքներ, անասնակեր խոտ, անտառից փայտ տեղափոխելու համար ունեն տրանսպորտային միջոցներ, որոնք չունեն պետական համարանիշներ: Պարեկային ծառայության աշխատողներից խուսափելու համար այդ տրանսպորտային միջոցների տերերը դրանցով ճանապարհ դուրս չեն գալիս: Գարնանը, երբ մեկնարկեն գյուղատնտեսական աշխատանքերը, այդ տրանսպորտային միջոցների տերերը չեն կարողանալու տրանսպորտով դաշտերը մեկնել, տեխնիկայով այնտեղ գործեր անել: Առաջիկայում դոմինոյի էֆեկտով վատանալու են նաեւ ավտոպահեստամասեր վաճառողների գործերը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍ

ՄԻՔԱՆՑՔԻ ԱՊԱՇՐՔԱՓԱԿՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ԲԱՆԱՁԵՎ

ԱՄՆ Կոնգրեսի հայկական խմբի համանախագահներ Ֆրենք Փալոնը, Գուս Բիլիրակիսը, Ադամ Շիֆը, Դավիթ Վալադաոն եւ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ավագ անդամ Բրեդ Շերմանը շրջանառության մեջ են դրել երկկուսակցական բանաձեւի նախագիծ՝ նպատակ ունենալով վերջ տալ Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակմանը:

Բացի Ադրբեջանի գործողությունները խստորեն դատապարտելուց, բանաձեւի նախագիծը նաեւ նախանշում է որոշակի գործողությունների շրջանակ, որոնք Միացյալ Նահանգները կարող է ձեռնարկել ստեղծված իրավիճակը հանգուցալուծելու համար: Մասնավորապես առաջարկվում է.

-Ադրբեջանի կողմից իրականացված պատերազմական հանցագործությունների միջազգային քննությանն օժանդակություն:

-Միջազգային գործընկերների եւ Արցախի իշխանությունների հետ համագործակցություն՝ Լաչինի միջանցքում միջազգային դիտորդների տեղակայման ուղղությամբ:

-Նախագահի կողմից 907-րդ բանաձեւի պահանջների անհապաղ կատարման ապահովում եւ Ադրբեջանին տրամադրվող ամերիկյան ռազմական ու անվտանգային աջակցության դադարեցում:

-Նախագահի կողմից Արցախի շրջափակման եւ մարդու իրավունքների այլ խախտումների համար պատասխանատու ադրբեջանցի պաշտոնյաների նկատմամբ օրենքով սահմանված պատժամիջոցների կիրառում:

-Արցախում հումանիտար ճգնաժամից տուժած բնակչության համար ամերիկյան հումանիտար օժանդակության ապահովում՝ ներառյալ Արցախում USAID-ի (ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն) գրասենյակի բացում:

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը հանձնախմբի եւ վերջինիս դաշնակից համայնքային այլ կազմակերպությունների անունից ողջունել է բանաձեւի նախագծի ներկայացումը եւ նկատել, որ դրա անցկացման շուրջ երկկուսակցական կոնսենսուս ապահովելու ուղղությամբ Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը կշարունակի ակտիվ աշխատանքներ իրականացնել, որպեսզի խափանվի Արցախն էթնիկ զտման ենթարկելու ադրբեջանական քաղաքականությունը:

ԱՄՆ կենգրեսականներին ուղղված Ֆրենք Փալոնի նամակում վերջինս օրենսդիրներին խրախուսել է հովանավորել բանաձեւի նախագծի առաջխաղացումը՝ ավելացնելով. «Ալիեւի ռեժիմը կանխամտածված քայլեր է ձեռնարկում բնիկ հայ բնակչությանն Արցախից հեռացնելու եւ նրանց՝ իրենց նախնիների երկրում ազատ, արժանապատիվ եւ ժողովրդավարական ապրելու հնարավորությունից զրկելու համար: Դա էթնիկ զտումների հստակ նշան է, որը մենք չենք կարող անտեսել»: Փալոնը նաեւ պնդել է, որ «Միացյալ Նահանգները պետք է անհապաղ գործի եւ օգտագործի բոլոր հասանելի դիվանագիտական գործիքները՝ միջանցքը վերաբացելու համար, նախքան այս հումանիտար ճգնաժամը դառնա աղետալի»:

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը, համայնքային լայն համախմբմամբ, շարունակում է աշխատանքները՝ Արցախում ստեղծված իրավիճակի հաղթահարմանը նպաստելու եւ, առհասարակ, իր քաղաքական առաջնահերթությունները կենսագործելու ուղղությամբ, որոնցից մի քանիսը ներկայացված են հիշյալ բանաձեւի նախագծում:

ՓՈԽՆԱԽԱՐԱՐ

Ո՞Վ Է ԲԱՆԱԿՈՒՄ ՉԾԱՌԱՅԱԾ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ

Երեկ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար նշանակվեց Վահան Կոստանյանը, որը նախկինում նախարարի խորհրդական էր: Նկատենք՝ նա իշխանության հերթական կադրերից է, որն ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից:

Նախորդ տարի ԱԺ նիստում այս մասին հայտնել էր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը՝ ընթերցելով ՊՆ-ից ստացված իր հարցման պատասխանը: Մանուկյանը հիշեցրեց, որ Վահան Կոստանյանը 2018-ին ասպիրանտուրա ընդունվելու համար երեք տարի ժամկետով տարկետման իրավունք էր ստացել, այդ ընթացքում եղել է խորհրդարանի նախագահի օգնականն ու խորհրդականը:

«Երեք տարի գիտությամբ չզբաղվելուց հետո մայիսին դիմումով դուրս է գրվել ասպիրանտուրայից: Ես նախարարությանը հարցրել էի՝ արդյոք այս տարվա ամառային զորակոչին Կոստանյանը զորակոչվել է զինված ուժեր, թե ոչ, որովհետեւ հիմա արդեն աշխատում է որպես ԱԳ նախարարի խորհրդական: ՊՆ-ից տեղեկացրել են, որ նա ազատվել է զինծառայությունից՝ օրենքով սահմանված հիմքով: Մանրամասները չգիտեմ, բայց Վահան Կոստանյանն ազատվել է զինծառայությունից»,- ասաց Գեղամ Մանուկյանը: Ներկաներն էլ արձագանքել էին, թե հիվանդության պատճառով:

Նշենք, որ հեղափոխությունից հետո Կոստանյանը Արարատ Միրզոյանի հետ պաշտոններ է ստանում: Նա առաջին փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի պաշտոնից 2018-ին սեփական դիմումի համաձայն ազատվել էր հենց գիտությամբ զբաղվելու համար: Ապա Կառավարությունը 42 քաղաքացու, այդ թվում՝ Վահան Կոստանյանին տարկետման իրավունք էր տվել ասպիրանտուրայում ուսանելու համար:

Դրանից հետո Կոստանյանը նշանակվեց Արարատ Միրզոյանի՝ այդ ժամանակվա ԱԺ նախագահի օգնական, ապա՝ խորհրդական, ապա նրա հետ եկավ ԱԳՆ:

«Ժողովուրդ» օրաթերթը դեռ նախորդ տարվա նոյեմբերին էր գրել, որ Հայաստանի արտաքին քաղաքականությանն առնչվող հիմնական հարցերը ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանի խորհրդական Վահան Կոստանյանն է որոշում: Հենց Կոստանյանն է արտոնում ՀՀ արտաքին քաղաքականության հետ կապվող բոլոր տեքստերը, այդ թվում՝ թե՛ միջազգային գործընկերներին ուղղված արձագանքները, թե՛ մամուլի առանձին հաղորդագրությունները:

«Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի իշխանական պատգամավորները, արտգործնախարարության աշխատակիցներն ու ընդհուպ վարչապետ Փաշինյանի աշխատակազմը իրենց հայտարարությունները, տեքստերը այդ քննարկումների համար նախատեսված խմբում են տեղադրում, որ Կոստանյան Վահանն աչքի տակ անցկացնի, իր համաձայնությունը տա, ապա նոր հրապարակվեն դրանք»,- ասել էր ՔՊ-ամերձ մեր աղբյուրը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ճՏՊ. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»

ԲԱՑԱՐՁԱԿ ԱՌԱՋԱՏԱՐԻ ԴԻՐՔՈՒՄ

Հինգերորդ տարին անընդմեջ «Ամերիաբանկ»-ը պահպանում է հիփոթեքային շուկայի բացարձակ առաջատարի դիրքերը: 2022-ի ընթացքում բանկի հիփոթեքային պորտֆելն ավելացել է մոտ 45 մլրդ դրամով կամ 32%-ով՝ հասնելով 186 մլրդ դրամի: 31.12.2022թ.-ի դրությամբ «Ամերիաբանկ»-ի մասնաբաժինը շուկայում հասնում է 22%-ի:

2022թ.-ին «Ամերիաբանկ»-ի միջոցով առաջնային շուկայից գնվել է 1,635 նորակառույց բնակարան: Հատկանշական է, որ հիփոթեքային վարկերի մոտ 30%-ը հաստատվել եւ տրամադրվել է օնլայն՝ Estate.ameriabank.am հարթակի միջոցով:

«Ուրախ ենք փաստել, որ նախորդ տարի օրական մեկ ընտանիք ձեռք է բերել բնակարան մեր նոր հարթակի միջոցով: Սա մեզ անչափ ոգեւորում է հարթակն էլ ավելի զարգացնելու ու դրա միջոցով նոր հնարավորություններ ստեղծելու, իհարկե, բարելավելու կյանքի որակը»,- ասում է «Ամերիաբանկ»-ի հիփոթեքային եւ ավտովարկավորման վարչության ղեկավար Գեւորգ Մանուկյանը:

Ընդհանուր առմամբ, 2022թ. ընթացքում հարթակում ստացվել է վարկունակության ստուգման ավելի քան 5,200 նախնական վարկային հայտ:

2022թ.-ի ընթացքում «Ամերիաբանկ»-ը միջազգային առաջատար երեք ամսագրերի՝ GlobalFinance-ի, Euromoney-ի եւ TheBanker-ի կողմից ճանաչվել է տարվա «Լավագույն բանկը» Հայաստանում: Այս առթիվ բանկը մեկնարկել է «Եռակի լավագույնը» արշավը՝ «Լավագույն հնարավորությունը ստեղծում են մարդիկ» կարգախոսով: Այն նվիրված է վերջին տարիներին բանկի ձեռքբերումների հետեւում կանգնած բոլոր մարդկանց՝ հաճախորդներից ու գործընկերներից մինչեւ աշխատակիցներ:

Արշավի շրջանակում նկարահանված հոլովակներից մեկը պատմում է տուն գնելու ամենակարճ օնլայն ճանապարհի՝ Estate.ameriabank.am հարթակի մասին:

Ավելի վաղ «Եռակի լավագույնը» արշավի շրջանակում հրապարակվել են տեսանյութեր՝ նվիրված «Ամերիաբանկ»-ի ԿՍՊ ծրագրերին եւ օնլայն / մոբայլ բանկինգին:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն առաջատար ֆինանսական- տեխնոլոգիական հաստատություն է եւ ՀՀ տնտեսական ոլորտի առավել նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: «Ամերիաբանկ»-ը ներկայանում է նորարար ու թվային միջավայրով՝ էկոհամակարգով, որը մեկտեղում է ֆինանսական եւ ոչ ֆինանսական ծառայությունները եւ հնարավորություն ընձեռում բոլոր հիմնական ուղղություններով ստանալ հարմարավետ եւ հնարավորինս արագ ֆինանսավորում: Հաշվի բացումից մինչեւ քարտի տրամադրման եւ ֆինանսավորման համար դիմելու ամբողջ ուղին այժմ հնարավոր է անցնել էկոհամարգի առցանց միջավայրում:

«Ամերիաբանկ»-ն առաջնորդվում է հաճախորդամետ եւ բիզնեսի պատասխանատու վարման քաղաքականությամբ՝ թվային, ժամանակակից ու անվտանգ միջավայրում ապահովելով սպասարկման բարձր որակ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ՕՐԵՆՔ

ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ՝ նախատեսվում է լայնածավալ փոփոխություններ իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքում. Օրենսգրքի 266 հոդվածից փոփոխվելու է 122-ը: Նախագիծը հավանության է արժանացել կառավարության կողմից:

Նախատեսվող փոփոխությունները նպատակ ունեն կարգավորել աշխատողների եւ գործատուների իրավահարաբերությունները, լուծել իրավակիրառ պրակտիկայից բխող խնդիրներն ու օրենսգրքի կարգավորումները հնարավորինս համապատասխանեցնել Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին:

Ըստ այդմ՝

-Առաջարկվում է վերանայել գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը եւ հանել կենսաթոշակային տարիքը լրանալու կապակցությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը (բացառելու աշխատանքային պայմանագրի լուծումը տարիքով հիմնավորելու հանգամանքը): Միաժամանակ հստակեցվում են կենսաթոշակային տարիքում գտնվող աշխատողների հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կարգավորումները. ի տարբերություն գործող կարգավորումների, որում տրված չէ գործատուին հնարավորություն կենսաթոշակառուներին աշխատանքի ընդունել անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով, նախագծով նախատեսվում է գործատուին տալ այդ իրավունքը:

-Աշխատողների քանակի եւ (կամ) հաստիքների կրճատման դեպքում (աշխատանքային պայմանագրերի լուծման պարագայում) աշխատանքում մնալու նախապատվության իրավունք է նախատեսվում սահմանել հաշմանդամության կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի, ինչպես նաեւ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակմամբ հաշմանդամության կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողի կամ զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի ընտանիքի անդամի (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ քույր, հարազատ եղբայր, տատ, պապ) համար: Ընտանիքի անդամների համար եւս սահմանվում են որոշակի պայմաններ՝ նախապատվության իրավունքի համար:

-Աշխատողի հանգստի ապահովման՝ օրենսգրքով նախատեսված երաշխիքի պահպանման նպատակով նախատեսվում է, որ եթե աշխատողը երկուսուկես տարի անընդմեջ խուսափում կամ հրաժարվում է իրեն հասանելիք ամենամյա արձակուրդի կամ դրա մի մասի տրամադրումից՝ չներկայացնելով ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին դիմում, ապա գործատուն արձակուրդ է տրամադրում առանց աշխատողի դիմումի: Միաժամանակ առաջարկվում է գործատուի կողմից աշխատողին տուժանք (ժամկետից հետո կետանցված յուրաքանչյուր օրվա համար՝ աշխատողի միջին ամսական աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան միջին ամսական աշխատավարձը) վճարելու պահանջ այն դեպքերի համար, երբ գործատուն աշխատողին շուրջ երկուսուկես տարի չի տրամադրում արձակուրդ:

-Աշխատողին հնարավորություն է տրվում աշխատատեղը պահպանելով, ուսման ողջ ժամանակահատվածում, բայց ոչ ավելի քան երկու տարի, գործատուի համաձայնությամբ ուսումնական արձակուրդ ձեւակերպելով՝ օտարերկրյա ուսումնական հաստատություններում բարձրացնելու իր մասնագիտական որակավորումը կամ ձեռք բերելու անմիջականորեն աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված նոր գիտելիքներ կամ զարգացնելու դրանք:

-Առաջարկվում է վերանայել նաեւ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը: Այդ հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման հնարավորություն է նախատեսվում այն դեպքերի համար, երբ աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում աշխատողը խախտել է աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանության մասին կանոնները, որի հետեւանքով վտանգվել է անձանց կյանքն ու առողջությունը, ինչպես նաեւ երբ աշխատողն անօրինական օգտագործել է գործատուի համակարգչային տեխնիկան կամ տեղեկատվական համակարգերը, որի միջոցով ձեռք է բերել աշխատանքային կամ անձնական տվյալներ եւ իրականացրել է տվյալների անօրինական օգտագործում, որոնք խաթարել են գործատուի բնականոն աշխատանքը:

-Հստակեցվում են մինչեւ 18 տարեկան անձանց աշխատանքին առնչվող կարգավորումները: Մասնավորապես, նախատեսվում է վերանայել եւ կրճատել աշխատող երեխաների աշխատանքային ժամերի տեւողությունները եւ հստակ սահմանվել, որ երեխաները կարող են աշխատել միայն պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս:

- Հնարավորություն է տրվում ոչ թե մինչեւ մեկ, այլեւ երկու տարեկան երեխա խնամող աշխատողին իրավունք տալ նվազեցնելու իր աշխատաժամանակը, վերանայվել է երեխային կրծքով կերակրող կնոջը մինչեւ երեխայի մեկուկես տարին լրանալը, երեխային կերակրելու համար յուրաքանչյուր երեք ժամը մեկ տրամադրվող լրացուցիչ ընդմիջման մասով կարգավորումը: Մասնավորապես, հանվել է երեխային կրծքով կերակրելու պայմանը եւ նախատեսվել, որ բացի հանգստի եւ սնվելու համար տրամադրվող ընդմիջման ժամերից, յուրաքանչյուր երեք ժամը մեկ կես ժամից ոչ պակաս տեւողությամբ լրացուցիչ ընդմիջում է տրամադրվում մինչեւ երկու տարեկան երեխա ունեցող կնոջը՝ այդ ընդմիջումների տեւողությունը պայմանավորելով միայն երեխայի տարիքով, այլ ոչ թե նաեւ երեխային կերակրելու հանգամանքով: Միաժամանակ հարկ է նկատել, որ նշված կարգավորումը նախատեսող դրույթում մեծացվել է նաեւ երեխայի տարիքային շեմը մեկուկես տարեկանի փոխարեն՝ երկու տարեկան:

-Նախատեսվում են կարգավորումներ՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների, աշխատավարձից պահումների եւ գանձումների դեպքերի, աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերի, աշխատանքային հարաբերություններում բռնության կամ ոտնձգության հասկացության սահմանման, ինչպես նաեւ իրավակիրառ պրակտիկայից բխող մի շարք խնդիրների վերաբերյալ:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐԸ

«Կոնվերս բանկ»-ը հեղինակավոր Global Finance ամսագրի կողմից լավագույնն է ճանաչվել «Առեւտրի ֆինանսավորող լավագույն բանկը Հայաստանում» անվանակարգում՝ վերահաստատելով առաջատարի դիրքն այս ոլորտում: Հունվարի 25-ին Լոնդոնում «BAFT Europe Bank-2023» համաժողովի ընթացքում կայացած մրցանակաբաշխությանը մասնակցել եւ առեւտրի ֆինանսավորման ոլորտում հեղինակավոր մրցանակը ստացել է «Կոնվերս բանկ»-ի ֆինանսական տնօրեն Հրանտ Հակոբյանը:

«Առեւտրի ֆինանսավորման ոլորտում անցած տարի կայուն աճ է գրանցվել՝ պայմանավորված գործընթացների ավտոմատացմամբ եւ նորարարությունների կիրառմամբ»,- ասել է Global Finance-ի հրատարակիչ եւ խմբագրական տնօրեն Ջոզեֆ Դ. Ջիարապուտոն՝ հավելելով, որ մրցանակաբաշխությունում հաղթած բանկերն ապրանքների եւ ծառայությունների առաջարկներով իրենց երկրների առաջատարներն են:

Շնորհակալություն հայտնելով վստահության համար՝ «Կոնվերս բանկ»-ի ֆինանսական տնօրենը նշել է. «Մեզ համար մեծ պատիվ է հերթական անգամ արժանանալ Global Finance ամսագրի մրցանակին «Առեւտրի ֆինանսավորման լավագույնը Հայաստանում» անվանակարգում: Մրցանակն ապացուցում է մեր բիզնես ճկունությունը եւ հաստատում է առեւտրի ֆինանսավորման ոլորտում մեր քայլերի արդյունավետությունը: Այսօր «Կոնվերս բանկ»-ը կիրառում է բիզնեսի ֆինանսավորման լայն գործիքակազմ՝ սկսած վարկավորումից մինչեւ առեւտրի ֆինանսավորման գործիքների ու վերաֆինանսավորման միջազգային ֆոնդերի կիրառմամբ ֆինանսավորման բարդ սխեմաներ՝ ապահովելով սպասարկման բարձր որակ: Մեր ծառայությունների ընդլայնման ուղղությամբ քայլերը կլինեն շարունակական»:

Նշենք, որ Global Finance-ը միջազգային ֆինանսական ամսագիր է, որը հիմնադրվել է 1987թ.: Այն հրատարակվում է ամսական պարբերականությամբ 50.000 տպաքանակով եւ տարածվում է աշխարհի մոտ 200 երկրում: Ամսագրի վարկանիշով՝ «Կոնվերս բանկ»-ը Հայաստանում առեւտրի ֆինանսավորման ծառայությունների առաջատարն է եղել նաեւ 2019- 2021 թթ.:

Մանրամասները՝ 010-511-211, converse-bank.am:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՋԱՏԱԳՐՈՒՄ

«ԴՈՄ ՄՈՍԿՎԻ» ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Երեւանում՝ «Դոմ Մոսկվի» մոսկովյան մշակութագործարարական կենտրոնում, տեղի է ունեցել «Շրջափակում. ժամանակների կապը» ցուցահանդեսի դաշտոնական բացումը, որտեղ ներկայացված էին Սերգեյ Լարենկովի «Անտեսանելի շրջափակված Լենինգրադը» ֆոտոնախագծի նյութերը: Ցուցահանդեսը նվիրված է Լենինգրադի շրջափակումից ազատագրման 80 եւ քաղաքը ֆաշիստական շրջափակումից ամբողջական ազատագրման 79-րդ ամյակին:

Ցուցահանդեսի բացմանը ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը կարեւորել է «հիշողության էստաֆետի» պահպանումն ու փոխանցումը նոր սերունդներին:

«Ուզում եմ հիշեցնել, որ Հայաստանը իրական օգնություն է ցուցաբերել Լենինգրադի բնակիչներին՝ ընդունելով շրջափակված քաղաքի ավելի քան 300 երեխաների: Երեւանում կա նաեւ այդ տարիներին նվիրված հուշարձան, որտեղ ամեն տարի ծաղիկներ ենք խոնարհում: Եվս մեկ անգամ շնորհակալություն եմ հայտնում Հայաստանին եւ հայ ժողովրդին այն ամենի համար, ինչ արել են ռազմի դաշտում եւ թիկունքում», - նշել է դեսպանը:

Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնի գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանն էլ նշել է.

«Հայրենական մեծ պատերազմի տարիներին լենինգրադցիների եւ քաղաքի պաշտպանների հերոսությունը, տոկունությունը, նրանց ոգու ուժը, նվիրվածությունն ու սերը հայրենիքի հանդեպ մինչեւ օրս օրինակելի են: Փորձությունների, սխրանքների եւ ընդհանուր հաղթանակների հիշողությունը համախմբել եւ միավորել է մեր ժողովուրդներին: Այսօր մեր խնդիրն է երիտասարդ սերնդին դաստիարակել մեր նախնիների հերոսական օրինակներով»:

Ցուցահանդեսին ներկա էին ԱԺ պատգամավոր, Հայաստանում ռուսական համայնքի ներկայացուցիչ Ալեքսեյ Սանդիկովը, ՀՀ-ում Բելառուսի դեսպանության ավագ խորհրդական Սերգեյ Տրոցյուկը, Հայրենական մեծ պատերազմի վետերան, ՀՀ վաստակավոր ուսուցիչ Ռոզալիա Աբգարյանը: Նրանք բոլորն ընդգծել են նման միջոցառումների կարեւորությունը խորհրդային ժողովրդի սխրանքների մասին հիշողությունը պահպանելու եւ սերունդներին փոխանցելու գործում:

Ցուցահանդեսի պատվավոր հյուրը շրջափակված Լենինգրադի բնակիչ Գալինա Պետուխովան էր:

«Չէի կարող բաց թողնել իմ հայրենի քաղաքին նվիրված ցուցահանդեսի բացումը: Նայելով ներկայացված լուսանկարներին՝ կարծես կրկին հայտնվեցի շրջափակված քաղաքում եւ վերապրեցի այդ ամենը: Այս ցուցահանդեսը պետք է ցույց տալ բոլորին, խոսել եւ պատմել, եւ ոչ մի դեպքում չպետք է մոռանալ տեղի ունեցածը»,- նշել է Գալինա Պետուխովան՝ շնորհակալություն հայտնելով «Դոմ Մոսկվի» կենտրոնին Հայրենական մեծ պատերազմի վետերանների նկատմամբ մշտական ուշադրության եւ նման միջոցառումների կազմակերպման համար:

Ցուցահանդեսում ներկայացված էին տասնյակ ֆոտոկոլաժներ, որտեղ ճշգրտությամբ համադրված են նույն վայրի կադրերը, բայց լուսանկարված տարբեր ժամանակներում՝ Լենինգրադի շրջափակման տարիներին եւ 21-րդ դարի սկզբին:

Լենինգրադի շրջափակումից ազատագրման 80 եւ քաղաքը ֆաշիստական շրջափակումից ամբողջական ազատագրման 79-րդ ամյակին նվիրված միջոցառումները կշարունակվեն. հունվարի 31-ին՝ ժամը 14:00-ին, տեղի կունենա կլոր սեղան քննարկում, ժամը 15:00-ին՝ վավերագրական ֆիլմի ցուցադրություն:

ԼՈՒՐԵՐ

ԵԳԻՊՏՈՍԸ ԿՈՉ Է ԱՐԵԼ

Եգիպտոսի բարձրագույն կրոնական հաստատությունն աշխարհի մուսուլմաններին կոչ է արել բոյկոտել շվեդական եւ հոլանդական ապրանքները երկու եվրոպական երկրներում ծայրահեղ աջ ակտիվիստների կողմից իսլամի սուրբ գիրքը պղծելու պատճառով: Սուննի մահմեդական աշխարհի առաջատար կրոնական հաստատության՝ եգիպտական «Ալ-Ազհար» կազմակերպության կոչը վերջինն է մահմեդական աշխարհի բացասական արձագանքների շարքից Շվեդիայում եւ Նիդեռլանդներում տեղի ունեցած միջադեպերին: Շաբաթ օրը դանիացի հակաիսլամիստ ակտիվիստ Ռասմուս Փալուդանը Ստոկհոլմում՝ Թուրքիայի դեսպանատան մոտ, այրել է Ղուրանը: Կիրակի օրը ծայրահեղ աջ «Պեգիդա» շարժման հոլանդացի առաջնորդ Էդվին Վագենսվելդը Հաագայում՝ Նիդեռլանդների խորհրդարանի մոտ, պատռել է Ղուրանի էջերը եւ տրորել դրանք: Երեքշաբթի օրը հարյուրավոր մարդիկ բողոքի ցույց են անցկացրել Պակիստանի արեւելյան Լահոր քաղաքում տեղի ունեցած պղծման դեմ: Բողոքի ցույցեր են տեղի ունեցել նաեւ Թուրքիայի երկու խոշոր քաղաքներում՝ Ստամբուլում եւ Անկարայում: Ստոկհոլմում տեղի ունեցած միջադեպից հետո Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Շվեդիային ասել է, որ ՆԱՏՕ-ին անդամակցելու իր շարունակական փորձերում ՆԱՏՕ-ի աջակցությունը չակնկալի:

ՈՍԿՈՎ ՊԱՏՎԱԾ ՄՈՒՄԻԱ

Եգիպտոսը ներկայացրել է ոսկով պատված մումիա եւ չորս դամբարան, այդ թվում՝ հին թագավորի «գաղտնիքի պահապանը», որոնք հայտնաբերվել են Կահիրեի հարավում գտնվող Սակկարա գերեզմանատանը: Եգիպտոսի հնագույն մայրաքաղաք Մեմֆիսում, որն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում, ավելի քան մեկ տասնյակ բուրգեր, կենդանիների գերեզմաններ եւ հին ղպտիների քրիստոնեական վանքեր են գտնվել: Ամենամեծ դամբարանը՝ «զարդարված առօրյա կյանքի տեսարաններով», պատկանել է Խնումջեդեֆ անունով մի հոգեւորականի, տեսուչի եւ ազնվականի: Այն հայտնաբերվել է 4300 տարի առաջ կառավարած Հինգերորդ դինաստիայի վերջին թագավոր Ունասի բուրգերի համալիրում: Մյուս գերեզմանը պատկանել է Մերիին, որը ծառայել է որպես փարավոնի կողմից նշանակված «գաղտնքի պահապան»՝ քահանայական տիտղոս, որը կրել է պալատի բարձրաստիճան պաշտոնյան, նա հատուկ կրոնական ծեսեր կատարելու լիազորություն է ունեցել: Երրորդ դամբարանը պատկանել է Պեպի I փարավոնի բուրգային համալիրի մի քահանայի, իսկ չորրորդը՝ Ֆետեկ անունով դատավորին եւ գրողին: Ֆետեկի դամբարանը ներառել է այդ տարածքում երբեւէ հայտնաբերված «ամենամեծ արձանների» հավաքածուն: 15-մետրանոց հորում արշավախումբը հայտնաբերել է նաեւ կրաքարե մեծ սարկոֆագ, որը մնացել է կնքված, «ինչպես հին եգիպտացիները թողել են այն 4300 տարի առաջ»: Ներսում եղել է «ոսկեզօծ» մումիա, որը պատկանել է Գեկաշեպես անունով մի մարդու:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ

Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթ է ընդունել Բրյուսովի անվան համալսարանի ռեկտորի խորհրդական Գրիշա Թամրազյանի հայցը՝ ընդդեմ Հանրային հեռուստաընկերության: Այս մասին ArmLur.am-ը տեղեկացավ «Դատալեքս» տեղեկատվական համակարգից:

Նշենք, որ Թամրազյանը պահանջում է Հանրային հեռուստաընկերությունից հրապարակայնորեն հերքել զրպարտող համարվող տեղեկությունները:

Հիշեցնենք, որ 2022 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Հանրային հեռուստաընկերության «Լուրերի» թողարկման ժամանակ, հեռարձակվել է մի տեսանյութ, որտեղ, ըստ ռեպորտաժի հեղինակի, Գրիշա Թամրազյանը հայհոյել է ԿԳՄՍ այդ ժամանակվա նախարար Վահրամ Դումանյանին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության գրահրատարակչության ոլորտի համատեքստում 2022 թվականին մեկնարկած «Հայ մշակույթը հանրահռչակող օտարալեզու գրականության հրատարակում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում հրատարակվել է «Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը» անգլերեն ժողովածուն:

Գիտահանրամատչելի այս ժողովածուն նախատեսված է ընթերցողների առավել լայն լսարանի համար: Առանձին հոդվածների տարբերակով փորձ է արվել ամփոփ, սակայն գիտական արդի ընկալումներին համահունչ ներկայացնել հայ ժողովրդի մշակութային ինքնատիպ նյութական եւ հոգեւոր ժառանգության ընտրանին:

Այն ընթերցողական լայն շրջանակներին հնարավորություն կտա բացահայտել եւ ճանաչել հայոց պատմության ու մշակույթի որոշակի շերտեր:

Հրատարակության 1000 օրինակ տպաքանակից 500-ն առաքվել է արտերկրում գործող 500 գրադարանի:

● *Հունվարի 31-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Հովեր/Զմեռային համերգ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Իմ ֆեյսբուքյան էջը կոտրել են եւ սկսել են տարբեր գրառումներ կատարել իմ մասին. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Գրիգորի Հայրապետյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկ է իմանալ, որ վերոնշյալ հանցագործության դեպքի առթիվ քրեական գործ հարուցվելուց հետո իրականացված միջոցառումների արդյունքում բացահայտվելու է Ձեր ֆեյսբուքյան էջը կոտրած անձի ինքնությունը եւ նրան առաջադրվելու է մեղադրանք, եւ հետագայում, որքան էլ որ ցանկանաք Ձեր՝ որպես տուժողի բողոքը հետ վերցնել, ապա բողոքը հետ վերցնելու հիմքով քրեական գործը չի կարճվի, քանի որ այդ հանցագործության դեպքում մեղադրանքը հանրային է, այսինքն՝ անկախ Ձեր կողմից բողոք ներկայացնելուց՝ պետությունն է մեղադրանք առաջադրելու այդ անձանց: Ուստի եթե կան կասկածներ, որ Ձեր ֆեյսբուքյան էջի կոտրվելը զուտ չար կատակ է կամ կատարվել է Ձեր մտերիմ անձանց կողմից, ապա պետք է մինչ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելը խորը մտածել այդ մասին եւ նոր որոշում կայացնել հաղորդում ներկայացնելու մասին:

ՀՀ ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ քրեական օրենսգրքի 251-257-րդ հոդվածներով սահմանված են համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված քրեական հանցագործությունների տեսակները, որոնցից է նաեւ համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելը: Մասնավորապես, համակարգչում, համակարգչային համակարգում, ցանցում կամ մեքենայական կրիչների վրա պահվող եւ օրենքով պահպանվող տեղեկատվության համակարգի որեւէ մաս կամ ամբողջությամբ համակարգ առանց թույլտվության մուտք գործելը (ներթափանցելը), որը կատարվել է պաշտպանիչ համակարգի խախտմամբ եւ անզգուշությամբ առաջացրել է տեղեկատվության փոփոխություն, պատճենահանում, ոչնչացում կամ ուղեփակում (մեկուսացում) կամ համակարգչի, համակարգչային համակարգի կամ ցանցի կամ համակարգչային սարքավորումների շարքից դուրս բերում կամ այլ զգալի վնաս, պատժվում է տուգանքով՝ 200.000-400.000 դրամի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ցանկացել եմ տեսնել վաճառվող մսի որակի ստուգման հավաստագիրը, սակայն մերժել են. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Սուսաննա Վարդազարյան (48 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մսի վաճառքով զբաղվող յուրաքանչյուր անձ կամ կազմակերպություն պարտավոր է ունենալ որակի ստուգման հավաստագիր, որով հաստատվում է վաճառվող մսի որակի համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին: Մսի վաճառքով զբաղվող այն անձինք, որոնք չունեն որակի ստուգման հավաստագիր, իրավունք չունեն իրականացնելու մսի վաճառք, այն էլ՝ այնպիսի մսի վաճառք, որի ծագումը անհայտ է կամ ստուգում չի անցել: Եթե մսի վաճառք իրականացնողը չի ներկայացնում որակի ստուգման հավաստագիրը եւ հրաժարվում է նաեւ վաճառքի ներկայացված միսը վաճառել Ձեզ, ապա Դուք իրավունք ունեք այդ մասին ահազանգել ՀՀ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն:

ՀՀ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ձեր ահազանգի հիման վրա ստուգում կիրականացվի մսի վաճառքով զբաղվով տվյալ տնտեսվարող սուբյեկտի մոտ, եւ եթե հայտնաբերվի ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, ապա Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը վարչական պատասխանատվության կենթարկի տնտեսվարողին առանց որակի ստուգման վկայականի մսի վաճառքով զբաղվելու համար եւ կարգելի նրա կողմից այդպիսի գործունեության ծավալումը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Բարերարներ Միքայել եւ Կարեն Վարդանյանները հերթական բարեգործական ծրագիրն են իրականացրել. 44-օրյա պատերազմում զոհված կամ անհայտ կորած ճանաչված 1098 զինծառայողի ընտանիքներից յուրաքանչյուրը, որոնք ունեն անչափահաս երեխա, Հայոց բանակի օրվա առթիվ միանվագ ստացել են 300-հազարական դրամ ֆինանսական աջակցություն: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 330 մլն դրամ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.01.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: